

ՔԱՂԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԿԱՍ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ
ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐԸ ՔԱՂԱՑԻՎԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տիգրան ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի ասպիրանտ*

Ժամանակակից աշխարհում իրավա-
կան պետության և սահմանադրա-
կան ժողովրդավարության հիմնա-
կան հենասյուներ համարվող մարդու իրա-
վունքները և ազատությունները կկրեին
հռչակագրային բնույթ, եթե երաշխավոր-
ված չլինեին խախտված իրավունքները
վերականգնելու արդյունավետ կառուցա-
կարգերով: Դրանց շարքում ուշադրության
է արժանի նոր երևան եկած հանգամանք-
ներով դատական ակտերի վերանայման
ինստիտուտը, որն արդարադատության
պատշաճ իրականացման և օրինականու-
թյան ապահովման կարևորագույն երաշ-
խիքներից մեկն է քաղաքացիական դա-
տավարությունում¹:

Նոր երևան եկած հանգամանքներով
դատական ակտերը վերանայելու վարույ-
թին բնութագրական է այն հանգամանքը,
որ այստեղ վերանայման ենթակա են բա-
ցառապես օրինական ուժի մեջ մտած դա-
տական ակտերը: Դա նշանակում է
քննարկվող ինստիտուտի առավել հստակ,
լիարժեք և ողջամիտ իրավակարգավոր-
ման անհրաժեշտությունը, քանի որ, մտնե-
լով օրինական ուժի մեջ, դատական ակտը

ծեռք է բերում օրենքի ուժ, կողմերի համար
դառնում է «մասնավոր օրենք», պետական
հարկադրանքի ուժով ապահովված խիստ
որոշակի վարքագծի կոնկրետ կանոններ
սահմանող իրավական ակտ²: Այս կապակ-
ցությամբ հիշարժան է «Բրումարեսկուն
ընդդեմ Ռումինիայի» գործով Եվրոպական
դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ *res
judicata*, այսինքն՝ դատական ակտերի
վերջնական լինելու սկզբունքը պահան-
ջում է, որ կողմերից ոչ մեկը իրավունք
չպետք է ունենա պահանջելու վերջնական
և պարտադիր դատական ակտի վերանա-
յում՝ գործը ուղղակի կրկնակի քննելու և
գործով նոր ակտ կայացնելու նպատակով:
Այսինքն՝ հարցի առնչությամբ երկու կար-
ծիքի առկայության հնարավորությունը
չպետք է հիմք հանդիսանա կրկնակի
քննության համար: Նահանջն այդ սկզբուն-
քից արդարացված է միայն այն դեպքում,
երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի
փաստաբանների առկայության դեպքում³:

Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքացիական դատա-
վարության օրենսգրքի⁴ 204.32 հոդվածը
սահմանում է նոր երևան եկած հանգա-
մանքներով դատական ակտի վերանայ-
ման հիմքերը: Նոր երևան եկած հանգա-
մանքները դատավարության սուբյեկտնե-
րին նախկինում անհայտ այն հանգամանք-
ներն են, որոնք գոյություն են ունեցել օբ-
յեկտիվ իրականությունում գործի քննութ-
յան ժամանակ, գործը լուծելու համար ու-
նեն էական նշանակություն և դրանով իսկ

կասկածի տակ են դնում դատարանի՝ տվյալ գործով արած հետևությունները, այսինքն՝ դատական ակտի հիմնավորվածությունը⁵: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմք կարող են հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն այն «նոր երևան եկած հանգամանքները», որոնք նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Նման պայմաններում տեսական և գործնական առանձնակի կարևորություն է ստանում այն հարցերի պատասխանները, թե արդյոք որպես նոր երևան եկած հանգամանքներ կարող են դիտվել վկայի կողմից կեղծ ցուցմունք, փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու, ինչպես նաև փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու փաստերի կապակցությամբ նախապատրաստված նյութերով կայացված քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ հաստատված հանգամանքները, և եթե այո, ապա այդ հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի ո՞ր կետի լույսի ներքո են ենթակա զնահատման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Այսինքն, նշված նորմում օրենսդիրը նախա-

տեսել է միևնույն խմբում ընդգրկված մի քանի հանգամանքներ, որոնց բնութագրական են հետևյալ հատկանիշները.

1. դրանք հանգամանքներ են, որոնք վկայում են ակնհայտ անթույլատրելի ապացույցի (վկայի կեղծ ցուցմունք, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացություն, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանություն և այլն) մասին, որը դրվել է դատական ակտի հիմքում,

2. առկա են օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որով հավաստվում են հանցագործության առկայության փաստը և հանցանք կատարած անձանց մեղքը,

3. վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքը, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը պետք է հանգեցնեն ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն⁶: Այդ պատճառով էլ գործում առկա որևէ ապացույցի կեղծ լինելը դատավճռով հաստատվելու դեպքում այդ հանգամանքը հիմք չէ դատական ակտի վերանայման համար, եթե տվյալ ապացույցով հաստատվող գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատված են համարվել նաև այլ՝ արժանահավատ ապացույցների հիման վրա⁷: Հետևաբար, այս համատեքստում ակնհայտ է դառնում, որ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 2-րդ կետի հիմքով չեն կարող նոր երևան եկած հանգամանքներ համարվել:

Անդրադառնալով քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ հաստատված հանգամանքների որակմանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 1-ին կետի

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

պահանջների տեսանկյունից՝ հանգում ենք հետևյալին.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործը լուծելու համար ունեն էական նշանակություն: Այսինքն, դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայվում է, եթե բողոք բերած անձն ապացուցում է, որ

1. այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ

2. այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և

3. այդ հանգամանքներն էական նշանակություն ունեն գործը լուծելու համար:

Սույն հիմքով դատական ակտը բողոքարկելիս պետք է նկատի ունենալ, որ գործը լուծելու համար էական նշանակություն ունեցող են համարվում այն հանգամանքները, որոնք ունեն իրավաբանական նշանակություն վիճելի իրավահարաբերության համար, և գործը քննած դատարանին հայտնի լինելու դեպքում դատարանը կկայացնեի այլ դատական ակտ⁸:

Մեր գնահատմամբ, այն դեպքերում, երբ նշված որոշումներով հաստատվում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող հանգամանքների, այսինքն՝ ապացուցման առարկայի կազմում ընդգրկված որևէ հան-

գամանք, որը հայտնի չի եղել և չէր կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց կամ հայտնի է եղել, բայց իրենից անկախ պատճառներով չի ներկայացվել դատարան, ապա այդպիսի հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 1-րդ կետի լույսի ներքո կարող են որակվել որպես նոր երևան եկածներ:

Իսկ այն դեպքերում, երբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներով հաստատվում են այնպիսի փաստեր, որոնք վկայում են գործով հետազոտված և գնահատված ապացույցների ոչ իրավաչափությունը, հետևաբար դատական ակտի հիմքում դրանք նշելու անթույլատրելիությունը, ապա այս դեպքերի համար պետք է արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը որևէ ուղղակի իրավակարգավորում չի նախատեսում, ինչը երկակի մոտեցման հիմքեր է ստեղծում:

Վերոգրյալը հիմնավորվում է նաև ՀՀ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությամբ⁹: Խոսքը տվյալ դեպքում այն մասին է, որ, օրինակ, թիվ ԵԱԲԴ/1137/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ հաստատված այն փաստը, որ տվյալ գործով վկա Վասյա Գերաշենկոն առաջին ատյանի դատարանում հայտնել է սուտ տեղեկություններ, գնահատվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 1-ին կետի պահանջների տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը իր 13.03.2009թ. թիվ ԵԱԲԴ/1137/02/08 որոշմամբ պատճառաբանել է հետևյալը.

«Սույն գործով բողոք բերած անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանք ներկայացվել է վիճելի բնակարանում Ջարեհ Երիցյանի հաշվառված չլինելու հանգամանքը, ինչպես նաև ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննիչի «Նյութերով

քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 10.09.2007 թվականի որոշումը, որով հաստատվել է, որ Վասյա Գերաշենկոն, 2004 թվականին առաջին ատյանի դատարանում հանդես գալով որպես վկա, հայտնել է սուտ տեղեկություն:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի թիվ 3-141 (ՎԴ) որոշման ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ջարեհ Երիցյանի սեփականության իրավունքը Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 երկու սենյականոց բնակարանի 1/2 մասի նկատմամբ ճանաչելու հիմքում չեն դրվել ո՛չ վկա Վասյա Գերաշենկոյի տրված ցուցմունքները և ո՛չ էլ Ջարեհ Երիցյանի վիճելի բնակարանում հաշվառված լինելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոստիկանության Քննաքնն-Ձեյթուն բաժնի անձնագրային բաժանմունքի 24.03.2008 թ. գրությունը և ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննիչի «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 10.09.2007 թվականի որոշումը սույն գործի լուծման համար էական մշանակություն չունեն:

Իսկ մեկ այլ, օրինակ, թիվ ԵՇԴ/1410/02/08 գործով քրեական գործի մասը կարճելու և գործով վարույթը կասեցնելու մասին որոշմամբ հաստատված այն հանգամանքը, որ Կալինինի անվան կոլտնտեսության ընդհանուր ժողովի թիվ 3 արձանագրության վերաբերյալ 08.12.2006 թվականի թիվ 01-20/1910 արխիվային քաղվածքում կատարվել է կեղծիք, և ավելացվել է «1.300 քմ» նշումը, ՀՀ վճռաբեկ դատարանը դիտարկել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո: Ընդ որում, վերջին դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ապացույցների թույլատրելիության կանոնը և նկատի ունենալով ապացույցների կեղծված լինելը հավաստող դատավճռի բացակայությունը, մերժել է վճռաբեկ բողոքը՝ առանց անդրա-

դառնալու այդ որոշմամբ հաստատվող փաստերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածի 1-րդ կետի տեսանկյունից:

Ասվածը վկայում է խնդրո առարկա հարցի շուրջ ձևավորված հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայության մասին, ինչը լուրջ սպառնալիք է պարունակում նման հանգամանքներում հայտնված գործին մասնակցող անձանց սահմանադրորեն երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից: Նման պայմաններում ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով սահմանված դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների տեսանկյունից ակնհայտ է դառնում առկա իրավական բացը վերացնելու օբյեկտիվ անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ քննարկվող խնդիրը որոշակի ուշադրության է արժանացել նաև մասնագիտական գրականության մեջ, որոնցում ևս որոշ հեղինակներ հիմնավոր են համարել առկա իրավական բացի գոյության փաստը և այն վերացնելու անհրաժեշտությունը¹⁰:

Հետևաբար, այն դեպքերում, երբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներով հաստատվում են այնպիսի փաստեր, որպիսի իրավիճակներում ակնհայտ է դառնում գործով հետազոտված և գնահատված ապացույցների ոչ իրավաչափ լինելը, անհրաժեշտ է, գործին մասնակցող անձանց իրավունքները և ազատությունները ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված, կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի լրացումներ: Միաժամանակ, նկատի ունենալով անցումային համակարգերին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են իրավագիտակցության դեռևս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անբավարար աստիճա-

ՔԱՂԱՔՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

նը, համակարգային անկատարությունները, կոռուպցիոն ռիսկերը և այլն՝ գտնույն ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածը նպատակահարմար է լրացնել հետևալ բովանդակությամբ 1.1-րդ կետով.

«1.1) բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ քրեական գործի հարուցումը ներժելու, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ բավարար պատճառաբանվածությամբ հաս-

տատվել են հանգամանքներ, որոնք ինքնին կամ տվյալ քաղաքացիական գործով հաստատված այլ հանգամանքների համակցությամբ հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն»:

Վերոշարադրյալ դրույթի ամրագրումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, մեր կարծիքով, մեծապես կնպաստի հասարակության վստահության մեծացմանը արդարադատության նկատմամբ և մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

¹ Տե՛ս **Исаеников О.В.** Гражданское процессуальное право России: учебник /О.В. Исаенкова, А.А. Демичев; под. ред. О.В. Исаенковой. М.: Норма, 2009, էջեր 384-385:

² Տե՛ս **Մեղրյան Ս.Գ.** Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 148:

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ. թիվ ԱՐԴ/0062/02/09 որոշումը:

⁴ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53), 17.06.1998:

⁵ Տե՛ս **Лебедев М.Ю.** Гражданский процесс: учебник для вузов/ М. Ю. Лебедев. М.: Издательство Юрайт; Высшее образование, 2010, էջ 340:

⁶ Տե՛ս **Решетникова И.В.** Доказывание в гражданском процессе: учеб.-практ. пособие. М.: Издательство Юрайт; ИД Юрайт, 2010, էջեր 376-377:

⁷ Տե՛ս **Резуенко А.Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. к.ю.н. Волгоград, 2001, էջ 64:

⁸ Տե՛ս Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. и доп. /Под ред. **М.К.Треушников**.: Издательский дом «Городец», 2010, էջ 581:

⁹ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009թ. թիվ ԵԱԲԴ/1137/02/08, 26.06.2009թ. թիվ ԵՇԴ/1410/02/08, 24.07.2009թ., ԵԱԲԴ/1693/02/08, 24.07.2009թ. ԵԱԲԴ/2610/02/08 որոշումները:

¹⁰ Տե՛ս **Ахмедов С.М.** Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... к.ю.н.–Москва, 2008, էջեր 107-109, **Завриев С.С.** Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... к.ю.н. –Москва, 2008, էջեր 62-63, **Резуенко А.Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. ... к.ю.н. Волгоград, 2001, էջեր 68-73:

**ПРОБЛЕМА РАССМОТРЕНИЯ ОБСТОЯТЕЛЬСТВ,
УСТАНОВЛЕННЫХ РЕШЕНИЯМИ ОБ ОТКАЗЕ В
ВОЗБУЖДЕНИИ УГОЛОВНОГО ДЕЛА, О ПРЕКРАЩЕНИИ
ПРОИЗВОДСТВА УГОЛОВНОГО ДЕЛА ИЛИ О
ПРЕКРАЩЕНИИ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ, КАК
ВНОВЬ ОТКРЫВШИЕСЯ ОБСТОЯТЕЛЬСТВА В
ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ**

Тигран МАРКОСЯН

*Аспирант кафедры гражданского
процесса ЕГУ*

Настоящая статья посвящена исследованию такой актуальной проблемы гражданского процесса, каким является вопрос рассмотрения обстоятельств, установленных решениями об отказе в возбуждении уголовного дела, о прекращении производства уголовного дела или о прекращении уголовного преследования, как вновь открывшиеся обстоятельства.

Анализ был произведен с точки зрения соответствия гражданско-процессуального законодательства и судебной практики международно-правовыми обязательствам РА, в частности с Конвенцией о защите

прав человека и основных свобод и прецедентным правом Европейского Суда. Исследование науки гражданского процессуального права и правоприменительной практики позволило констатировать правовой пробел, существующий в гражданско-процессуальном законодательстве.

С учетом вышесказанного и в обеспечение права каждого на судебную защиту, в том числе на обжалование судебных актов в работе были разработаны и представлены предложения по усовершенствованию производства по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам, который занимает важное место в системе институтов гражданского процесса.
